ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայակովսկի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովից

09 .11 . 2012թ. գյուղ Մայակովսկի

2012 թվականի նոյեմբերի 9-ին տեղի է ունեցել Մայակովսկի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Ա. Բարսեղյան
2. Ա. Հարությունյան
3. Հ.Հարությունյան
4. Է. Մանուկյան

/

Համայնքի ղեկավարի աշխատակազմից

1. Բ. Մարտիրոսյան / համայնքի ղեկավարի տեղակալ/
2. Ա. Հարությունյան / առաջատար մասնագետ /
3. Վ. Փայտյան / աշխատակազմի քարտուղար/
4. Գ. Ասատրյան /1-ին կարգի մասնագետ/

Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ: Մայակովսկի համայնքի 01.11. 2011- 01.11.2012թթ ընկած ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու կատարված աշխատանքների մասին (զեկ Վ. Բարսեղյան)

2012 թվականին համայնքի ավագանու որոշմամբ ամբուլատորիայի շենք կառուցելու համար անհատույց տրամադրվել է 612 քմ հողատարածք: Քաղաքացի Արամ Խաչատրյանի կողմից բարեգործական հիմունքներով իրականացվում են շենքի կառուցման աշխատանքները. /շենքի կառուցումը ավարտին կհասցվի տարեվերջին/ ,որի համար էլ համայնքի ավագանին նրան շնորհել է պատվավոր քաղաքացու կոչման , և համայնքի ղեկավարի կողմից պարգևատրվել համայնքի ղեկավարի հուշամեդալով :

Համայնքի տարածքի սանիտարական վիճակը բարվոք է , պատշաճ ձևով են իրականացվում աղբահանության աշխատանքները :

Համայնքում աճուրդ–վաճառքի միջոցով վաճառվել է 4334 քառ.մետր բնակավայրի կառուցապատման հողամաս և 4689 քառ.մետր հողամաս տրվել է վարձակալությամբ բյուջե մուտքագրվել 12 միլիոն դրամ :

2011թ. գույքային հարկերը հավաքագրվել են 106,5 %-ով , բացարձակ թվով կազմել է 5195.5 դրամ : 2011թ. դեկտեմբերի 9-ին համայնքի ավագանին ընդունել է 2012թ. բյուջեն , ըստ որի եկամուտները կազմել են 36370.6 դրամ ,ծախսերը ՝ 36730.6 դրամ, Ինքը ամսվա կտրվածքով եկամուտները կազմել են 24282.0 դրամ, ծախսերը 15804.7դրամ:

Հողի հարկը առաջին եռամսակում կազմել է 1587.4 դրամ , որի դիմաց առաջին եռամսյակում հավաքագրվել է 777,6 դրամ , որը կազմում է տարեկան պլանի 12%-ը, իսկ առաջին եռամսյակի 49%-ը : Մայակովսկու վարչական տարածքում գտնվող հողի հարկի չափը 2012թ.-ի համար կազմել է 6 350,0 մլն դրամ , իսկ գույքահարկը 5 600.0 մլն դրամ, որը այս պահի դրությամբ հավաքագրվել է 70- 80%-ով :

Թվով 130 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից , որոնց նախկինում կուտակված պարտքերի տուգանքները գրոյացվել են :

2011-2012թթ-ին համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է ՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 2 517,0 դրամի օգնություն :

ասֆալտապատման համար ծախսվել է 983 900 դրամ,

մեքենաների սարքավորումների ձեռք բերման համար 1 300 000 դրամ :

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչները ուղղեցին մի շարք հարցեր , որոնք վերաբերվում էին գյուղատնտեսությանը (հատկապես բողքում էին պարարտանյութի գներից , որը

անհասանելի է բնակչությանը):Առաջարկություններ եղան համայնքի նոր թաղամասի փողոցների բարեկարգման , կոյուղու անցկացման համար , մանկապարտեզի բացման , էլեկրասյունների անխիթար վիճակը բարելավելու և գետի հունի մաքրման մասին :

ՈՐՈՇՎԵՑ

1.Առաջիկայում գտնել համապատասխան միջոցներ / քանի որ ներկա վիճակում համայնքը չունի համապատասխան միջոցներ / նոր թաղամասի փողոցների բարեկարգման և կոյուղի անցկացնելու և գետի հունի մաքրման համար :

2. Մանկապարտեզի բացման կազմակերպում

3.էլեկտրասյուների վիճակը բարելավելու համար դիմել համապատասխան վերադաս մարմիններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ